Հուսիկ Արա

Դու իմ…

Որքան շատ աշխարհներ կան քո մեջ,
մինչդեռ դու իմ աշխարհն էիր միակ:

Քեզ չէի գտել հանկարծ,
դու եղել ես միշտ.
մի տեղ բաժանվել էինք՝
տուն գնալու նման
ու հանդիպել նորից:
Հարկ չկար ճանաչել քեզ.
դու մասն էիր իմ ամեն ինչի:

Դու իմ թանկն էիր,
լույսն ու օդը,
իմ լեզուն,
աչքն ու ականջն էիր,
շոշափելիքն ու հոտոտելիքը:
Իմ եկեղեցին էիր,
աղոթքն ու Աստվածը,
իմ լավն ու տաքն էիր,
իմ շատությունը,
իմ հացն ու ջուրն էիր,
շնչառությունը:
Դու իմ քաղաքն էիր,

տունն ու փողոցը,
իմ հայրն ու մայրն էիր,
իմ հայրենիքը:

Ամեն ինչն էիր իմ,
ես տեր էի ու իշխանություն.
ու թե տեսնես հիմա ինձ
չես նկատի,
որովհետև ես ոչինչ եմ առանց քեզ:

Ես աշխարհը կտայի քո դիմաց,
եթե աշխարհը դու չլինեիր: